

Արձանագրություն N 3

N <<ՊԹ-ԳՇՁԲ-17/4>>

Ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

26 օգոստոսի 2017թ.

ժ.11:00

Հանձնաժողովի նախագահ՝
Արեգ Փափազյան /մենեջմենթի գծով փոխտնօրեն/
Հանձնաժողովի անդամներ՝
Աննա Խաչատրյան /տնտեսական գծով փոխտնօրեն/
Աստղիկ Մելքոնյան /վերականգնման բաժնի վարիչ/
Հանձնաժողովի քարտուղար՝ Հայկանուշ Թովմասյան

Օրակարգ

հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Նիստը տեղի է ունեցել <<Հայաստանի պատմության թանգարան>> ՊՈԱԿ-ի շենքում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ 4:
2. <<ՊԹ-ԳՇՁԲ-17/4>> ծածկագրով ընթացակարգին հայտեր ներկայացրել էին հետևյալ մասնակիցները
 - 2.1 <<Ֆեռնէքսպրես>> ՍՊԸ-ն, ՀՀ, ք. Երևան, Այասի 114, Հեռ. +374 91407471, էլ.փոստ՝ ferrari.armenia@ferrarigroup.net
 - 2.2 <<ԱՐԿԱՆԵԼ>> ՍՊԸ-ն, ՀՀ, ք. Երևան, Հրաչյա Քոչար 10/98, Հեռ. +374 91402961, էլ.փոստ՝ arkanelkaren@gmail.com
3. <<ՊԹ-ԳՇՁԲ-17/4>> ծածկագրով ընթացակարգին որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները
4. <<ՊԹ-ԳՇՁԲ-17/4>> ծածկագրով գնման ընթացակարգին որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթեր ներկայացրել են՝
 1. <<Ֆեռնէքսպրես>> ՍՊԸ-ն, ՀՀ, ք. Երևան, Այասի 114, Հեռ. +374 91407471, էլ.փոստ՝ ferrari.armenia@ferrarigroup.net
5. **Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.**
 1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 46-րդ կետի դրույթներով <<Ֆեռնէքսպրես>> ՍՊԸ-ի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների ինչպես նաև հրավերով <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ ներկայացրած (եզրակացություն) հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող՝ հիմք ընդունելով <<ՊԹ-ԳՇՁԲ-17/4>> ծածկագրով հրավերի I մասի 8.12 կետի 4 ենթակետում նշված փաստաթղթերի առկայությունը:
 2. <<Ֆեռնէքսպրես>> ՍՊԸ-ի ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

<<Ֆեռնէքսպրես>> ՍՊԸ-ին ճանաչել հաղթող մասնակից

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0

6. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

6.1 <<ՊԹ-ԳՇՁԲ-17/4>> ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար

առաջին տեղը զբաղեցնող է ճանաչվում <<Ֆեռնէքսպրես>> ՍՊԸ-ն,

որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, որի հետ առաջարկվում է կնքել պայմանագիր,

<<ԱՐԿԱՆԵԼ>> ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը գերազանցում էր ծառայության համար նախատեսված ֆինանսական նիջոցները:

6.2 “Գնումների մասին” << օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

6.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0

7 Շահերի բախման բազակայության մասին

<<ՀՊԹ-ԳՀԾՁԲ-17/4>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նշված ծածկագրով գնման ընթացակարգի ընթացակարգի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստից հետո հայտարարում է, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունի շահերի բախում:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովի

Նախագահ՝		Արեգ Փափազյան
Անդամներ՝		Աննա Խաչատրյան
		Մելքոնյան Աստղիկ
Քարտուղար՝		Հայկանուշ Թովմասյան